էին նրա վրայ եւ մի հին կապերտի կտոր: Պատերը շինուած էին անտաշ քարերից, որոնց միացնող շաղախը, դարերի ընթացքում, խոնաւութիւնից փտելով, հողմահարուելով, ցած էր թափուել, եւ քարերի մէջտեղում բացուել էին այլանդակ ճեղքեր ու խոռոչներ: Այդ մթին խոռոչները խիստ յարմար պատսպարան էին ամէն տեսակ միջատների եւ սողունների համար: Բայց ես վախենում էի միայն կարիճներից եւ օձերից: Նրանց փոխարէն յայտնուեցաւ մի մոխրագոյն մողէս, որը, ինչպէս երեւում էր, այնքան ընտելացած չէր այդ խուցի նախկին բնակչի հետ, որ ամենեւին չէր խորշում մարդկանց ներկայութիւնից: Նա դուրս եկաւ, մի արագ շրջան կատարեց նեղ խուցի մէջ, անցաւ իմ եւ Ասլանի մէջտեղից, յետոյ կանգ առեց, սրածայր գլուխը վեր բարձրացրեց, ուշադրութեամբ նայեց մեզ վրայ եւ, կարծես ճանաչելով, որ իր սիրելի հայր սուրբը չենք, մի առանձին ըհաճութեամբ հեռացաւ եւ կրկին մտաւ իր խոռոչի մէջ: Մկները ազատ կերպով թագաւորում էին այստեղ, որովհետեւ վանքում կատու չէին պահում: Չէին պահում եւ ոչ մի անասուն, մինչեւ անգամ հաւեր, որոնք գոնէ կոչնչացնէին միջատներին:

Խուցը մութն էր: Եթէ բուխարու մէջ վառող կրակը չլինէր, մենք գուցէ ճրագի կարօտութիւն կը զգայինք: Երկու նեղ լուսամուտներ, որոնց բարձրութիւնը երկու թզաչափ եւ լայնութիւնը մէկ թզաչափ հազիւ կը լինէր, բացուած էին միմեանց մօտ, սենեակի այն գծի ներքեւ, որտեղ առաստաղը միանում էր պատի հետ: Այդ բարձր ծակերից ստացուող լոյսը յատակին չէր հասնում: Այդ տեսակ լուսամուտներ կարելի էր տեսնել բանտերում միայն: Բայց այնտեղ հասկանալի է նրանց նշանակութիւնը, թէ ինչու լուսամուտները մի քանի անգամ բարձր, քան թէ մարդու հասակը, վերեւից են բաց անում: Որպէսզի բանտարկեալները հնար չգտնէին փախչելու: Իսկ այստեղ ի՞նչ նշանակութիւն ունէին:

— Չե՞ս իմանում, — բացատրեց Ասլանը, — այդ նրա համար են լուսամուտները այդքան նեղ եւ բարձրից բացուած, որպէսզի այդ խուցերի մէջ բնակուող աբեղաները չհրապուրուեն դրսի տեսարաններով, այլ կենտրոնանան իրանց հոգեւոր մտածութիւնների մէջ:

Դա մի սոսկալի անձնուրացութիւն պէտք էր համարել, որ մարդիկ կամաւ զրկում են իրանց աստծու գեղեցիկ աշխարհի վրայ նայելուց, մանաւանդ մի այնպիսի գեղեցկութեան, որպէս էր շրջապատող ծովը իր սքանչելի տեսարաններով:

Բոլոր խուցերը, որոնց թիւը հարիւրից աւելի կը լինէր, այդ ձեւով էին շինուած: Նրանց դռներն անգամ չէին բացւում դէպի դուրսը, որտեղից կարելի կը լինէր մի բան տեսնել: Դռները բացւում էին մթին լաբիրինթոսի նման